«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Ուսուցիչ՝ Արմենուհի Ստեփանյան

Արմավիրի մարզի Դալարիկի Հ.Հովհաննիսյանի անվան հ.1 միջնակարգ դպրոց

Վերապատրաստող ուսուցիչ՝ **Կարինե Գևորգյան**

ԱՐՄԱՎԻՐ- 2022

Բովանդակություն

1.Նախաբան…..... 2
2.Ներածություն……4

3.Գրական ակնարկ.....7

4.Հետազոտական համատեքստ……8

5.Գործնական համատեքստ……11

6.Ամփոփում.....14

7. Եզրակացություն-Առաջարկ……15

8.Գրականության ցանկ……16

Նախաբան

Հետազոտության թեման-Խմբային քննարկումների ազդեցությունը սովորողների լեզվամտածողության և սոցիալական ունակությունների զարգացման վրա

Մանկավարժական հետազոտության առաջին քայլը հիմնախնդրի որոշումն է ,նրա առանձնացումը ուսումնասիրման համար, որը պահանջում է առանձնահատուկ դիտողականություն, մասնագիտական գիտելիքներ, փորձ:

Հետազոտության խնդիրը-Սովորողների լեզվամտածողության և սոցիալական ունակությունների զարգացումը խմբային քննարկումների ազդեցությամբ Ուսումնական նյութի արդյունավետ յուրացում, փնտրել ուղիներ նպատակին հասնելու համար:

Հետազոտության նպատակը .

. սովորողի լեզվամտածողության զարգացում

. սոցիալական ունակությունների զարգացում /լսելու, դիտարկելու, կոլեկտիվ քննարկելու/

. Ճանաչողական ակտիվության բարձրացում

. Ճանաչողական գործունեության զարգացում

.Ինքնագործունեության խթանում ,դրական խթանի ձևավորում

.Նոր ձեռքբերվելիք գիտելիքների վերջնական արդյունքների պատկերացում Նպատակը՝ վերաձևակերպված հիմնախնդիրն է, իսկ հիմնախնդրի լուծումը՝ հետազոտության նպատակ:

Մանկավարժական հետազոտության մեթոդաբանության հիմնական հատկանիշներն են՝ հետազոտության նպատակների որոշումը/հաշվի առնելով գիտության զարգացման մակարդակը, պրակտիկայի արդիական պահանջները:

Հետազոտության թեմայի ձևակերպումը պետք է արտահայտի թեմայի արդիականությունը:Արդիականության չափանիշները պետք է բխեն ուսուցման պահանջներից:

Արդիական պահանջները հետևյալն են՝

.երեխաները տարբեր են , հետևաբար դպրոցներն ու հանրակրթական ողջ համակարգը պետք է հարմարվեն յուրաքանչյուր սովորողի անհատական պահանջմունքներին:

.երեխաները սովորում են տարբեր արագությամբ, և ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար:

.եթե տարբեր ժամանակներում կրթական հատուկ մակարդակ ունեցող փոքրաթիվ մարդկանց առկայությունը բավարար էր հասարակության մյուս անդամների ղեկավարման , նրանց բազմաբնույթ կենսական պահանջները

բավարարելու համար, ապա այսօր հասարակության անդամների ոչ բավարար կրթական մակարդակը ոչ միայն ցանկալի չէ,այլև հղի է վտանգներով: Միայն հանրակրթության մակարդակի ցարգացմամբ է հնարավոր ապահովել հասարակության աստիճանական զարգացումը և բավարարել հասարակության հարաճուն պահանջները:/1/(տես՝Հանրակրթություն. Կրթություն բոլորի համար, թե՞ անհատների), Բալայան Ա. Գիտական տեղեկագիր 2007, էջ 142-145:

Խմբային քննարկումների ժամանակ երեխային տրվում է ավելի մատչելի ուսուցում, որը ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին,զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող աշխատանքների կազմակերպում:

Ներածություն

Հստակ վերջնարդյունքի ձևավորման համար պետք է ուսումնասիրել հետազոտության հիմնախնդիրներից որևէ մեկի դերը, կամ մի քանիսի հմադրումը միաժամանակ ուսուցման գործընթացում:

Հետազոտության խնդիրը պետք է պատկերացում տա,թե ինչ պետք է անել նպատակին հասնելու համար:Կատարել խնդրի ճիշտ ախտորոշում և որոշել,թե ի՞նչ մեթոդով պետք է աշխատել:Կարևոր է կատարել դասի ճիշտ պլանավորում:Պետք է կատարել դիտարկում և արձանագրել հետազոտման գործընթացին մասնակցող սովորողի կամ սովորողների մասին տեղեկություններ առողջության մասին,թե ինչպես են սովորում դպրոցում,ինչ նախասիրություններ ունեն,ինչ կուզեին փոփոխել տվյալ դասապրոցեսի ժամանակ և այլն:

Դիտարկման գործիքակազմի ընտրությունը բարձրացնում է տվյալների հավաստիությունը և արդյունքների վերահսկողությունը:Դիտարկման տևողությունը և գործիքակազմը կախված է առաջադրված խնդրի ուսումնասիրման բարդությունից և տարիքային առանձնահատկություններից: Դիտումը կարող է իրականացվել զրույցի միջոցով,որը հստակ կապված կլինի հետազոտության հիմնախնդրի հարցերից՝հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները և հոգեվիճակը:Պետք է հարցերը ձևակերպել պարզ և հասկանալի,խուսափել անզգույշ հարցերից, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները և հոգեվիճակը:

Հետազոտող ուսուցիչը պետք է՝

-հստակ որոշի հետազոտման նպատակը

-կազմի հետազոտման ծրագիր

-կիրառի չափման տարբեր սանդղակներ/դիագրամաներ/

Հետազոտության ժամանակ կարող են կիրառվել հարցման տարբեր ձևեր՝բանավոր,գրավոր կամ գործնական:Ուսուցման ակտիվ մեթոդները ապահովվում են կրթական խնդիրների լուծում՝տարբեր տեսանկյունից:

1.Ուսումնական դրական խթանի ձևավորում:

2.Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում

3.Կրթական գործընթացում աշակերտների ակտիվ ներգրավվածություն:

4.Ճանաչողական գործընթացների զարգացում՝խոսք,հիշողություն,մտածողություն:

5.Ուսումնական նյութի առավել արդյունավետ յուրացում:

6.Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ուսուցման այս ձևը թույլ է տալիս աշակերտներին նոր նյութի ընկալմանը ակտիվ մասնակցություն ցուցաբերելով:

Ուսուցման ակտիվացումը կարող է հանգեցնել ինչպես ուսուցման ձևերի և մեթոդների բարելավմանը,այնպես էլ ուսուցման գործընթացի կազմակերպման և կրթական համակարգի կատարելագործմանը:Ուսուցման ակտիվացման գաղափարների և հիմնախնդիրների մասին խոսել են դեռևս վաղ ժամանակաշրջաններում :

Ըստ Դիստերվերգի՝վատ ուսուցիչը ճշմարտություն է հաղորդում,լավ ուսուցիչը՝սովորեցնում է գտնել դրանք՝նրբորեն մշակելով դրան հասնելու ճանապարհները:

Ամեն մի ճշմարիտ ուսուցման մեջ միացած են 3 կարևոր գործոն.

1.Իմացություն

2.Մեր աշակերտի և դպրոցի նկատման

3.Մակավարժական ընդունակություններ

Ուսուցիչը դպրոցի համար նույնն է,ինչ արևը՝տիեզերքի:Նա մտավոր ուժի աղբյուր է:

Մեթոդաբանությունը մեկնաբանվում է որպես տեսական և պրակտիկ գործունեության իրական սկզբունք:Առանց մեթոդաբանական գիտելիքների անհնար է իրականացնել մանկավարժական հետազոտություն և անել վերլուծություն:

Մեթոդի հիմնական գործառույթներն են ճանաչողական գործընթացի կազմակերպում և կարգավորումը,այսինքն իմացաճանաչողական նորմերի

ամբողջություն:Դա ճանաչողական գործընթաց է,որը ունի ձևական և բովանդակային բնույթ:

Յուրաքանչյուր ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծությունը,որի արդյունքում ուսուցիչը ձեռք է բերում ինքնակատարելագործում և ինքնազարգացում,որը թույլ է տալիս համահունչ քայլել կրթության ոլորտում շարունակական փոփոխվող պահանջներին:/2/

(տես՝ Օ. Դուդումյան,Մանկավարժություն, 2016 ,էջ 22):

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1. Ավելի շատ պոտք է խոսի աշակերտը,ավելի շատ լսի ուսուցիչը: Սովորողները պետք է մղվեն հետազոտական գործունեության՝ուսումնասիրելու շրջական աշխարհը,որը կնպաստի այն բանին,որ աշակերտները իրենք կյուրացնեն գիտելիքներ և դրանք կստուգեն փորձով:Միշել դը Մոնտեն

2. Այն դպրոցները,որտեղ սովորեցնում էին աշխարհին նայել ուրիշի աչքերով և մտածողությամբ ճիշտ չէին: Սովորողը պետք է ինքնուրույն կարողանա պրպտել,հասկանալ ցանկացած երևույթի էությունը:Յան Ամոս Կոմենսկի

3.,,Հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է ունենա հասարակության պահանջմունքներից առանձնացված և սահմանված կրթության որոշ մակարդակ,,:Դուդումյան Օ. ,,ՈՒսումնական գործընթացի կազմակերպման արդի մոտեցում,,2020

4.Կրթության հեռանկարը մարդու այնպիսի հմտությունների զարգացումն է , որոնք չեն կարող մեքենայացվել,,: Խաչատրյան Ս. 2020

5. Պետք է թույլ տալ սովորողներին մտածել,օգնել,բացահայտել սեփական ունակությունները և ոչ թե բթացնել՝հաղորդելով պատրաստի տեղեկություններ:Յոհան Հայնրիխս Պեստալոցցի

6. Հատուկ միջոցներով և մեթոդներով պետք է աջակցել սովորողներին՝անկախ նրա մասնագիտական կողմնորոշումից հետաքրքրություններից, ապահովել հետագա կրթությունը շարունակելուանհրաժեշտ մակարդակ:Վասիլի Սուխոմլինսկին

7. .Աշխատանքի սկզբից մինչև նրա վերջը՝ վերջնարդյունքը մտքում պահելով,նշանակում է՝գործ նախաձեռնել նպատակի հստակ պատկերացմամբ և իմանալ,թե դեպի ուր ես գնում:Այս դեպքում առավել հստակ ես պատկերացնում՝թե որտեղ ես այս պահին և ի՞նչ ճիշտ քայլեր պետք է ձեռնարկես ճիշտ վերջնարդյունքի հասնելու համար:<<Խիստ ազդեցիկ մարդկանց յոթ սովորույթները >>: Սթիվեն Քով

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Դասավանդման մեթոդը ներառում է ուսուցչի կողմից օգտագործվող սկզբունքներ և մեթոդներ՝խթանելու աշակերտի ուսուցման գործընթացը:

1. Որպեսզի մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ՝այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ:Մեթոդ ընտրելիս պերք է հաշվի առնել առարկայի բնույթը և աշակերտների առաջադիմությունը:

2. ՈՒսուցման մեջ աշակերտը և ուսուցիչը հավասարապես ակտիվ դեր են կատարում:Ուսուցչի դերը դառնում է ոչ թե հաստատված գիտելիք հաղորդելը,այլ նպաստել աշակերտի ուսուցմանն ու նյութի ընկալմանը:

Ուսուցումը և գնահատումը փոխկապակցված են,այսինքն դասավանդման գործընթացում ուսուցումը շարունակաբար գնահատվում է ուսուցիչների կողմից:

Կախված դասարանի և սովորողների տարիքային առանձնահատկությունից , կախված ուսուցանվող նյութի բարդության աստիճանից և սովորելու ձևից, ուսուցիչը կարող է և ազատ է կիրառել որոշակի մեթոդներ՝ ըստ իր հայեցողության, որը նոր նյութը ավելի պարզ ու հասկանալի կդարձնի: Դպրոցում դասավանդման մեթոդները պարզ են և թույլ են տալիս հասնել ցանկալի արդյունքների:

Ուսուցման ժամանակակից մեթոդները ապահովվում են կրթական խնդիրների

լուծում՝տարբեր տեսանկյունից :.

.սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում

.կրթական գործընթացում աշակերտների ակտիվ ներգրավվածություն

.ճանաչողական գործընթացների զարգացում ՝խոսք,հիշողություն,մտածողություն

.Ուսումնական նյութի առավել արդյունավետ յուրացում

.Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում

.ուսուցանվող նյութի հանդեպ ցուցաբերած հետաքրքրության մակարդակը

.աշակերտների միջև փոխհամագործակցություն

.բանավոր խոսքի զարգացման մակարդակի ստուգում

.գործնական պարապմունքների ժամանակ ցուցաբերած հմտությունները

Ուսուցման ժամանակակից մեթոդները կարող են հանգեցնել ինչպես ուսուցման ձևերի և մեթոդների բարելավմանը,այնպես էլ ուսուցման գործընթացի կազմակերպման և կրթական համակարգի կատարելագործմանը:

Հետազոտման նպատակը նոր ձեռքբերվելիք գիտելիքների վերջնական և

միջանկյալ արդյունքների հիմնավորված պատկերացումն է:

ՈՒսուցման դասավանդման տարածված ձև է ,, Խմբային քննարկումներով ,,

դասավանդումը, որը իր մեջ ներառում է տարբեր մեթոդներ կամ մեթոդական հնարներ՝ ,,Խորանարդում,, , ,,Քարտեզագրում,, , ,, Նկարագրիր

- գուշակեմ ,, , ,,խճանկար,, և այլն:

Այս բոլոր մեթոդները կամ մեթոդական հնարները, որոնք կանցկացվեն խմբային քննարկումներով, կնպաստեն բարձրացնելու աշակերտների նոր նյութը ընկալելու մակարդակը,ուշադրության կենտրոնացմանը:

Կնպաստեն սովորողների լեզվամտածողության և սոցիալականունակությունների զարգացմանը՝ լսելու կարողություն, դիտարկելու, նյութը միասին քննարկելու հնտությունը:

Դասավանդման այս մեթոդները ընդլայնում են սովորողի մտահորիզոնը դասարանումնոր նյութի ծանոթացման և քննարկման ժամանակ: Ամրապնդում են նոր գիտելիքների յուրացումը , զարգացնում են մեկը մյուսին օգնելու կարողությունը:Աշակերտը ստանում է հնարավորություն նոր նյութի ընկալմանը ակտիվ մասնակցություն ցուցաբերել:

Խմբային քննարկումներով աշխատանքի ընթացքում , սովորողները համագործակցելով, արդյունքում ձևավորում են ընդհանուր աշխատառճ, միևնույն ժամանակ ձեռք են բերում խոսելու, բացատրելու, բանակցելու, վիճարկելուև հարցեր տալու անհատական հմտություններ: Համատեղ աշխատելով խմբերով , աշակերտները համատեղ իրագործում են ընդհանուր որևէ նպատակ : Այն

մտածողության համար առավել բարենպաստ միջավայր ստեղծելու միջոցներից մեկն է , որի արդյունքում սովորողները , մտքերն ու կարծիքները քննարկելով, դրսևորում են մտածողության մի մակարդակ ու որակ, ինչը տվյալ անհատի հնարավորություններից դուրս է:/3/(տես՝Դուդումյան Օ. ,,ՈԻսումնական գործընթացի կազմակերպման արդի մոտեցում,,2020 , էջ 10):

Խմբային քննարկումներով ուսուցումը կազմակերպելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր, դրանք են՝

.դրական փոխկախվածությունը,

. դեմ առ դեմ փոխազդեցությունը

. անհատական հաշվետվությունը և պատասխանատվությունը, .սոցիալական և համագործակցային հմտությունների ձևավորումը,

. խմբային գործընթացի մշակումը:

Դասը խմբային քննարկումների միջոցով ճիշտ կազմակերպելու համար, պետք է առաջնորդվել հետևյալ խարհուրդներով՝

.առաջադրանքը պետք է ներկայացնել պարզ ու հստակ

.խմբին տեղեկացնել ժամանակի սահմանափակման մասին

.խմբի անդամները և դասարանի մյուս աշակերտները պետք է միմյանց լսեն, եթե նույնիսկ համաձայն չեն մյուսների արտահայտած մտքերին

.ոչ ոք չպետք է իշխի մյուսների նկատմամբ

.խրախուսել և մասնակցությունը և հարցերը

.թույլ տալ յուրաքանչյուրին արտահայտվելու

.քննարկել ոչ թե անձին, այլ կատարումը:

Խմբային քննարկումներով ուսուցման հիմնական սկզբունքն է.

,,Յուրաքանչյուր երեխա նպատակ է, յուրաքանչյուր երեխա՝ միջոց. ամեն ինչ յուրաքանչյուրի համար, յուրաքանչյուրի օգնությամբ, յուրաքանչյուրի միջոցով,,: / 4/ (տես՝ ,,Մանկավարժական նախաձեռնություն,,հայկական ասոցիացիա,2011 էջ 28):

Գործնական համատեքստ

Հետազոտող ուսուցիչը իր աշխատանքում կարող է բախվել դժվարությունների,որոնք տարաբնույթ պատճառ կարող են ունենալ,կարող են խնդիրներ ծագել ինչպես ուսուցիչ-աշակերտ հարթակում,այնպես էլ աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում

Որևէ օբյեկտ կամ սուբյեկտ հետազոտելիս պետք է հաշվի առնել անձի կամ որոշակի մարդկանց խմբի գիտելիքները, հմտությունները, հետաքրքրությունները և ընդունակությունների ձևավորվածությունը:

ՈՒսուցիչը պետք է կարողանա սահուն կերպով անցում կատարել՝հարթելով ցանկացած իրավիճակ,որը կարող է խանգարել իր հետազոտական աշխատանքին:

Մանկավարժական հետազոտության մեթոդաբանության հիմնական գործառույթներն են.

1.Կանխորոշել,ապահովել ուսումնասիրվող գործընթացի կամ երևույթի վերաբերյալ համակողմանի տեղեկատվության ստացում:

2.Նոր տեղեկատվությամբ հարստացնել մանակավարժության զինանոցը:

3.Ապահովել մանկավարժագիտության եզրույթների և հասկացությունների ճիշտ կիրառումը:

4.Ստեղծել տեղեկատվական համակարգ՝հիմնված օբյեկտիվ փաստերի և գիտական ճանաչողության,տրամաբանական-վերլուծական միջոցների վրա:

Հետազոտության օբեկտի որոշումը հստակեցնում է ,թե՝

.ի՞նչ է հետազոտվելու

.ուսուցանվող նյութի յուրացման աստիճան

.ուսուցանվող նյութի հանդեպ ունեցած հետաքրքրության մակարդակ

.աշակերտների միջև փոխհամագործակցություն

.բանավոր խոսքի զարգացման մակարդակի ստուգում

.լեզվամտածողության և զարգացվածության մակարդակի ստուգում

.գործնական պարապմունքների ժամանակ ցուցաբերած հմտորություններ:

Մանկավարժական նոր մտածողությունը հիմնված է ավանդական մտածողության և կարծրատիպերի հաղթահարման վրա՝տեսության և պրակտիկայի միջև ստեղծելով ամուր կապ:

Մանկավարժական հետազոտության մեջ առաջնային դեր ունի տեսության և պրակտիկայի կապի սկզբունքը : Տեսությունը,որը չի հիմնվում պրակտիկայի վրա կրում է մտահայեցողական բնույթ:

Մանակավարժական հետազոտությունը ինքնանպատակ չպետք է լինի,այլ պետք է հիմնված լինի առաջավոր փորձի վրա,ստուգվի պրակտիկայում և նպաստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը,որից հետո պետք է կատարել խորը և համակողմանի վերլուծություն,ցուցաբերել ստեղծագործական մոտեցում:

_Խմբային քննարկումների ժամանակ բազմաթիվ անգամ համոզվել եմ թե ինչպես է քայլ առ քայլ զարգանում սովորողների լեզվամտածողության մակարդակը, ճանաչողական ակտիվությունը և պրակտիկ գործունեությունը:Ելնելով իմ մանկավարժական փորձից , կարող եմ ասել, որ ,քննարկումների ժամանակ ուսուցիչը լսում է աշակերտների քննարկումներն ու վերլուծությունները, ծանոթանում խնդիրներին և եթե պետք է նաև միջամտում և խորհուրդներ տալիս: Այսընթացքում /քննարկումից -քննարկում /, նկատվում է սովորողների սեցիալական ունակությունների զարգացումը: Նրանք դառնում են ավելի հանդուրժող, կարողանում են իրար ավելի լավ և հանգիստ լսել, կարծիքներ են փոխանակում, գալիս են փոխհամաձայնության:

_ Խմբային քննարկումները նպաստում են աշակերտների լեզվամտածողության և սոցիալական ունակությունների զարգացման վրա ոչ միայն դասապրոցեսի ՝ նոր դասի հաղորդման, կշռադատման փուլերում, այլև գործնական պարապմունքների ժամանակ՝ փորձարարական խնդիրների լուծման և լաբորատոր փորձերի կատարման ընթացքում:

_Խնդիրների լուծման ժամանակ աշակերտները խմբով քննարկելիս /խնդրի տվյալները, պահանջները,հայտաբերման ռեակցիաները/, ստեղծում են իրենց միջավայրը, տայիս են միմյանց հահցեր, աշխատեցնում կողքի պասիվ աշակերտներին:Աշակերտները անընդհատ աշխատում են, ստանում հանձնարարություններ,աջակցություն ուսուցչից,ընկերներից, խմբով կատարում են իրենց առաջադրանքը: Միջավայրը դառնում է ակտիվ - աշխատանքային,հագեցած:Երեխաներին հնարավորություն է տրվում ամբողջությամբ մտնել դասի՝տվյալ դեպքում խնդիրների լուծման մեջ և երեխաները չեն ձանձրաում:

_Լաբորատոր փորձերի և ցուցադրումների ժամանակ,առանց խմբային քննարկումների, աշակերտը մնում է պասիվ դիտողի դերում, իսկ խմբային

քննարկումով ուսուցման ժամանակ, որին կմասնակցեն խմբի բոլոր անդամները, աշակերտները ձեռք կբերեն խմբով աշխատելու, նյութերի և լաբորոտոր ամանեղենի հետ խնամքով աշխատելու, ընկերներին փոխօգնություն ցուցաբերելու և համագործակցելու հնտություններ:

_Կառաջանա վստահություն իրենց գիտելիքների նկատմամբ /իրենք մենակ չեն իրենց պրոբլեմի հետ/ ,գիտակցական վերաբերմունք և երևույթներն ու փաստերը ձևակերպելու , քննարկելու, ճիշտ եզրահանգումներ կատարելու կարողություն և հմտություն:

Ամփոփում

Հետազոտությունիկց հետո կատարվում է լրացուցիչ աշխատանք:Անհրաժեշտ է վերլուծել կատարած աշխատանքը և պարզել.

1.ուսուցիչը հասավ արդյո՞ք իր առջև դրված նպատակներին

2.ի՞նչ չափով և ինչպե՞ս իրականացան ակնկալիքները

3.Ճիշտ էր արդյո՞ք ընտրված մեթոդը

4.Ժամանակի բաժխումը որքանով էր իրատեսական

5.Ի՞նչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպեր և ինչպե՞ս

Կատարելով հետազոտական աշխատանք,ուսումնասիրելով աշակերտների մասնակցությունը դասին,կարող եմ ասել,որ ես որոշ չափով հասա իմ առջև դրված նպատակին՝բարձրացավ այն աշակերտների ակտիվությունը դասին,որոնք մինչև այդ ավելի պասիվ էին:

Տվյալ թեմայի համար ճիշտ էր ընտրված մեթոդը,որովհետև այդ ընթացքում բարձրացավ աշակերտների հետաքրքվածությունը,մեծացավ մրցակցությունը,որը տվեց դրական արդյունք:

Գործնական պարապմունքը նույնպես շատ կարևոր էր,քանի որ այն երեխայի մոտ զարգացնում է կարևոր հմտություններ՝ինքնուրույն գործելու,սեփական աշխատանքը ներկայացնելու,խմբի հետ համագործակցելու և այլն:Գործնական աշխատանք կատարելիս խթանվեց երեխաների ինքնագործունեությունը:Կարևորում եմ այն,որ աշակերտները օգնում են իրար,համագործակցում,քննարկում են միասին և վճիռներ կայացնում:

Եզրահանգում - առաջարկ

Միանշանակ կարող եմ ասել,որ այս մեթոդը հնարավոր չէ կիրառել քիմիայի այնպիսի դասերի ժամանակ,երբ նյութը պարունակում է նոր տեղեկատվություն,որովհետև այս դեպքում ուսուցիչը պետք է անմիջական մասնակցություն ունենա հաղորդվելիք դասին,բացատրի դասը և ուղղորդի աշակերտներին տարբեր փորձարարական խնդիրներ լուծելիս: <<Քիմիա>> առարկայի դասավանդման ժամանակ կարևորում եմ ուսուցչի մասնակցությունը նոր նյութի հաղորդմանը:Չեմ կարծում,որ առանց ուսուցչի օգնության աշակերտները կհաղթահարեն ներկայիս ծրագրային

պահանջները:

Առաջարկում եմ ,,ԽՄԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ,, որպես կրթական ծառայության ուսուցման ձև կամ միջոց, դարձնել ավելի ակտիվ և նորարար,որպեսզի երեխաներին էլ ավելի վստահություն ներշնչվի, նրանց մեջ գործնական հմտությունները ավելի զարգանան, ստանան ավելի շատ կիրառական գիտելիքներ: Երեխաների մեջ ամրապնդվի այնպիսի արժեքներ և հմտություններ, ինչպիսիք են փոխհարգանքը և փոխօգնությունը, կուռ տրամաբանությունը, նախաձեռնողականությունն ու ստեղծարարությունը, սովորելու նկատմամբ սերը, սեփական անձի արժևորումը և վարքի վերահսկումը: Ձեռք բերած հմտություններն ու գիտելիքները ոչ միայն նպաստեն երեխաների կրթական նվաճումներին, այլև խթանեն նրանց `կլանքում ավելիին ձգտելու, կարևորելու միջավայրում ներառված և գնահատված լինելու մոտիվացիան:

Գրականության ցանկ

1.Բալայան Ա.-,,Հանրակրթություն. Կրթություն բոլորի համար, թե՞ անհատների,, Գիտական տեղեկագիր 2007

2.Օ.Դուդումյան-,,Մանկավարժություն,,2016

3.Օ.Դուդումյամ, Ա.Բալայան-ՈՒսումնական գործընթացի կացմակերպման արդի մոտեցում,, 2020

4.Ս.Խաչատրյան-,,Կամուրջներ պատերի փոխարեն,, Անտարես 2014

5.Լ.Գևորգյան-,,Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն,,2010

6.А.Алаев ,,Активные методы обучения. 2006